ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱՅԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/9

ք. Երևան «22» փետրվարի 2021 թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի **Արթուր Սողոմոնյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **Վանդ-ԳԱՍՍ ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Գառնիկ Ներսիսյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի «Թռչնաֆաբրիկայի մոտ գտնվող խորքային հորի կառուցման»** շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են տեխնիկական հսկողության պայմանագիրը կնքելուց հետո: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է՝ 120 օր, որի մեկնարկի օրը կհստակեցվի կողմերի միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրով:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների **100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 6 Հավելվածում: Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված

աշխատանքների թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **18,200,000 (տասնութ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ**, որից **3,033,333 (երեք միլիոն երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում ստորագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	Վանդ-ԳԱՍՍ ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0001, Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 09419634
Հ/Հ՝ 900018001231	Հ/հ՝ 15700-11766900100
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Արթուր Սողոմոնյան	Գառնիկ Ներսիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«22» փետրվարի 2021թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹՈՉՆԱՖԱԲՐԻԿԱՅԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ	Գնացուցակ անվանումը և համարը	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակ	Միավորի արժեքը	Ընդհ. արժեքի տոկոսը
1	2	3	4	5	6	7
1	E1-968	Հորատանցքի տարաեքի մաքրում	խմ	3.0	2,987.52	8,962.56
2	P23-229 C310-1	Հողի և աղբի բարձում ե հեռացում 3կմ	տն	6.0	2,987.52	17,925.12
3	E4-56	Հորատանցքի ռոտորային հորատում III կարգի գրունտներում մինչև 100մ	մ	46.4	29,875.24	1,386,211.14
4	E4-58	Հորատանցքի ռոտորային հորատում V կարգի գրունտներում մինչև 100մ	մ	33.6	81,658.99	2,743,742.06
5	E4-160	Հորատանցքի ամրակապում 324x6,0 պողպատե խողովակներով մինչև 100մ խոր.	10մ	8.0	3,286.27	26,290.16
6	E4-271	Հորատանցքի ելքային մասի ցեմենտացում	այուն	1	502,903.81	502,903.81
7	E4-233	Φ324մմ եզրատունկ (обсадочный) խողովակների ազատ իջեցում կամ բարձրացում	10մ	8.0	348.54	2,788.32
8	E4-315	Φ324մմ ֆիլտրի տեղադրում	10մ	3.5	975.92	3,415.72
9	իտ	Φ324x6մմ եզրատունկ (обсадочный) խողովակ	մ	80.0	20,255.41	1,620,432.80
10	շուկա	Φ324մմ ֆիլտր	մ	35.0	33,858.60	1,185,051.00
11	E4-255	Եզրատունկ խողովակների եռակցում Φ324x6մմ	10մ	8.0	6,453.05	51,624.40
12	իտ	խիճ մանրահատիկ 5-10մմ	խմ	3.0	4,979.20	14,937.60
13	7-300 31 M շուկա	Խորքային պոմպի ագրեգատ ЭЦВ10-120-80 H=80մ,N=33կվտ	կոմպ.	1	1,211,630.20	1,211,630.20
14	E22-68	Ջրհան խողովակ Φ159x6 ՊՍ 632-80	գմ	35	15,933.46	557,671.10
15	E22-68	Պողպատե խողովակ Φ159x6 Д ՊՍ 10704-76	գմ	29	12,248.84	355,216.36
16	E22-117	Պոլիէթիլենե պեզոմետրիկ խողովակ Φ25մմ ՊՍ 8732-78	գմ	26.0	796.67	20,713.42

17	E22-433	Կցաշուրթի մոնտաժ N1 Dպ=150մմ, Pպ=100ՄՊա	հատ	2	3,883.78	7,767.56
						9,717,283.33
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
18	ինֆ	Կցաշուրթ N1 Dպ=150մմ, Pպ=100ՄՊա	կգ	13.25	4,979.20	65,974.40
19	E22-362	Մետաղական թերթեր	կգ	38.1	796.67	30,353.13
20	ինֆ	Հեղյուս-մանեկ	կգ	12.4	1,892.09	23,461.92
21	E22-362	Ծունկի տեղադրում a=90 աստիճան Dպ=150մմ	կգ	1	1,394.17	1,394.17
22	ինֆ	Ծունկ a=90 աստիճան Dպ=150մմ	հատ	1	9,860.85	9,860.85
23	E15-613	Մետաղական տարրերի երկշերտ ներկում	քմ	30.1	896.25	26,977.13
24	E37-727	Ամրան A500c	կգ	35.8	697.08	24,955.46
25	E4-337	Ջրի արտամղում օդամղված եղանակով""""""""<<էրլիֆտով>>	օր	2	235,018.55	470,037.10
26	E18-226	Մանոմետր	հատ	1	6,970.88	6,970.88
27	ինֆ	Մետաղական խողովակ 219*4	գմ	1.4	17,925.14	25,095.20
28	E22-68	Պողպատե խողովակի հենարանների համար Φ159x4 Д ԳՈՏ 10704-76	գմ	0.9	11,950.09	10,755.08
29	E6-128	Բետոնե գետնախարիսխի և հիմքի կառուցում B12,5 F150 W6դասի բետոնով	խմ	1.9	65,725.52	126,850.25
30	E6-1	Բետոն B7,5 հարթեցնող շերտի պատրաստում	խմ	0.2	45,808.70	9,161.74
31	P5-67	Խճե հենքի պատրաստում	խմ	0.7	11,950.09	8,365.06
32	E8-64	Ներդիր մետաղական մասերի տեղադրում	կգ	15.6	796.67	12,428.05
33	E6-20	Բետոնե հիմքերի կառուցում B12,5 F150 W4դասի բետոնով	խմ	0.8	41,825.33	33,460.26
34	E6-128	Բետոնե գետնախարիսխի և ժապավենավոր հիմքի կառուցում B12,5 F150 W4դասի բետոնով	խմ	1.3	48,796.22	61,971.20
35	E9-121 ինֆոր	Մետաղական կանգնակների և ցանցավոր շրջանակների տեղադրում	տն	0.34	547,712.73	186,222.33
36	E22-65	Պողպատե խողովակ Φ89x3	գմ	22.5	4,282.11	96,347.48
34	E6-83	Մետաղական ներդիր տարրեր 120x100,93x93	տն	0.026	547,712.73	14,240.53
38	Ինֆոր.	Մետաղական անկյունակ L=50x50x4	գմ	59.4	1,593.34	94,644.40
39	Ինֆոր.	Ցանկապատի մետաղական ցանց N50-2,0	քմ	26.94	1,394.17	37,558.94

40	Ինֆոր.	Բոնակ.ականք	կգ	0.6	398.33	239.00
41	Ինֆոր.	Ծխնի	հատ	2	398.33	796.66
42	Ինֆոր.	Փական	հատ	1	5,078.79	5,078.79
						1,383,200.00
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
43	E15-613	Մետաղական տարրերի երկբերտ ներկում	քմ	27	199.16	5,377.32
44	E1-961	Ցանկապատի տարածքի հարթեցում IIIկարգի գրունտներում	խմ	1.63	1,991.68	3,246.44
45	E23-2	Խճի փռում ցանկապատի տարածքում	խմ	1.5	1,722.80	2,584.20
46	E1-961	Փոսորակի մշակում IIIկարգի գրունտներում	խմ	7.7	1,722.80	13,265.56
47	E1-968	Ետիցք IIIկարգի գրունտներից հիմքերի կողքերը	խմ	5.1	1,075.50	5,485.05
48	E1-968	III կարգի գրունտների հարթեցում տեղանքում	խմ	2.6	1,075.50	2,796.30
49	8-25-1	Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան արտաքին տեղադրման LՏ-100/10 100ԿՎԱ 6/0, 0,4ԿՎ այդ թվում ա)6ԿՎ-ի մուտքի սարքավորում բ)Ուժային տրանսֆորմատոր ТМ-100/6,6/0,4ԿՎԱ գ)0,4ԿՎ-ի բաշխիչ սարքավորում դ)Բաժանիչ РЛНД/А-6/250,ПРН3-6М շարժաբերով ե)Ավտոմատ անջատիչ 160Ա զ)Հաշվիչ էլեկտրոնային եռաֆազ 380վ,5Ա հոսանքի տրանսֆորմատորով ТК-20,200/5Ա 3հատ է)Մետ.արկղ հաշվիչի տեղադրման համար	կ-տ	1	1,792,514.42	1,792,514.42
50	8-521-2	Ղեկավարման կայանի մոնտաժ САУ200	կտ	1	209,126.68	209,126.68
51	8-91-4	Անկյունային պողպատ	կգ	97.7	497.92	48,646.78
52	E11-11	Բետոն B12,5 F150 W4դասի	խմ	0.310	38,837.81	12,039.72
53	E6-1	Բետոն B7,5 F150 W4դասի	խմ	0.56	31,866.92	17,845.48
54	E6-16	Միաձույլ ե/բ սալի իրականացում B15 դասի բետոնով	խմ	0.17	37,841.97	6,433.13
55	ԻS	Ամրան Φ10A500cդասի	կգ	24.0	448.12	10,754.88
56	E1-961	Փոսորակի մշակում IIIկարգի գրունտներում	խմ	1.2	1,593.34	1,912.01

57	8-289-2	Տրանսֆորմատորի հողանցման կոնտուրի պատրաստում	հատ	1	132,304.72	132,304.72
58	8-472-3 ինֆորմ	Շերտապողպատ 40x4մմ	զմ	30	796.67	23,900.10
59	8-471-1	Պողպատ անկյունակային 50x50x5մմ L=2,5մմ	հատ	6	11,950.09	71,700.54
						2,359,933.33
1	2	3	4	5	6	7
60	ինֆորմ	Շերտապողպատ 25x4մմ	զմ	6	497.92	2,987.52
61	E1-961	IIIկարգի գրունտի մշակում հողանցման տեղադրման համար	խմ	9	2,531.43	22,782.87
62	E1-961	Ետլիցք տոփանումով	խմ	9.1	1,065.55	9,696.51
63	E1-961	Ավելցուկ գրունտի հարթեցում տեղում	խմ	1.1	1,065.55	1,172.11
64	8-661-1	Մալուխի անցկացում ԲՊԲ 35	100զմ	1.2	179,251.44	215,101.73
65	իտ	Պոլիէթիլենե խողովակ Փ50մմ	զմ	6.0	995.84	5,975.04
66	E1-961	III կարգի հողի լրամշակում ձեռքով	խմ	2.0	2,489.60	4,979.20
67	E1-968	II-րդ կարգի հողի փոռում տեղում ձեռքով	խմ	2.0	1,060.57	2,121.14
68	P21-417	Խարսխային ե/բ A10-1 հենարանի մոնտաժ	հատ	2	199,168.27	398,336.54
69	P21-416	Ե/բ Π10-1 հենարանի մոնտաժ	հատ	1	51,784.26	51,784.26
70	E6-2	Հենասյուների բետոնե հիմքերի պատրաստում B15 բետոնով	խմ	1.8	36,846.13	66,323.03
71	8-11,-1	Գծային բաժանիչ РЛМД 1-10У1, ПРН3-10У1 տիպի շարժաբերով	հատ	2	179,251.44	358,502.88
72	Ի.Տ.	50x50x5մմ անկյունակներ	զմ	16.0	2,788.36	44,613.76
73	շուկա	Մեկուսիչ ШФ10-А	հատ	9	4,979.21	44,812.89
74	շուկա	Մեկուսիչ կախովի ПС70-Д	հատ	12	5,975.05	71,700.60
75	Ի.Տ.	Հենասյուների մետաղական մասերի արժեքը	կգ	59.5	697.09	41,476.86
76	8-289-2	Հենասյուների հողանցման կոնտուրի պատրաստում	հատ	2	134,753.77	269,507.54
77	Ի.Տ.	Ամրանալար Փ10	կգ	80.5	537.75	43,288.88
78	8-368-2	Օդային 10կվա գիծ 35քմմ կտրվածքով հաղորդալարի անցկացումով	կմ	0.27	189,209.86	51,086.66

						1,706,250.00
		Ընդամենը				**15,166,666.67**
		ԱԱՀ 20%				**3,033,333.33**
		Ընդամենը				**18,200,000.00**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքում:

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Սույն պայմանագրի կատարումն իրականացնելու համար անհրաժեշտ է ***<<Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում>>*** *լիցենզիա* ***«Հիդրոտեխնիկական, Էներգետիկ»*** *ներդիրով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Վանդ-ԳԱՍՍ ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0001,
Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 15700-11766900100
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված թիվ 2
«22» փետրվարի 2021թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱԵՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱՅԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱՅԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**	*Տեխնիկական հսկողության պայմանագիր կնքելուց հետո, կողմերի միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրով սահմանված օրը*	*120 օր*
ԸՆԴԱՄԵՆԸ			*120 օր*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Վանդ-ԳԱՍՍ ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0001,
Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 15700-11766900100
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«22» փետրվարի 2021թ. կնքված
ՀՏ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			մարտ	փետրվար	հունվար	դեկտեմբեր	նոյեմբեր	հոկտեմբեր	սեպտեմբեր	օգոստոս	հուլիս	հունիս	մայիս	ապրիլ	Ընդամենը
1	45261148	ստորգետնյա հորատման աշխատանքներ	...	18,200,000	18,200,000	18,200,000	18,200,000	18,200,000	18,200,000	18,200,000	18,200,000	18,200,000	18,200,000	18,200,000	18,200,000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Վանդ-ԳԱՍՍ ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0001,
Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 15700-11766900100
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«22» փետրվարի 2021թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«22» փետրվարի 2021թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
«22» փետրվարի 2021թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱՅԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Վանդ-ԳԱՍՍ ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0001,
Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 15700-11766900100
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 6
«22» փետրվարի 2021թ. կնքված
ՀՇ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹՈՉՆԱՖԱԲՐԻԿԱՅԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Չափաբաժնի համար	Առաջարկվող սարքերի և սարքավորումների					
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
1	Погружной центробежный агрегат	ЭЦВ 10-120-80 нро	ЭЦВ 10-120-80 нро	Ливенский завод погружных насосов	*տես ստորև	24 ամիս
1	Մանոմետր	Մանոմետր МТ - 160	ТУ BY 101472320.001-2002	МЦ-Багория	*տես ստորև	24 ամիս
1	100ԿՎ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐ ТМГ	100ԿՎ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐ ТМГ	Кентауский трансформаторный завод		LSb-100/10 ԳՈՍՏ Р 52719-2007	3 տարի
1	Ղեկավարման կայան	САУ200	САУ200		Потребляемая мощность, кВт-33	24 ամիս

*** ЭЦВ 12-160-65 нро տեխնիկական բնութագիր**

ЭЦВ 10-120-80 нро

Подача, м3/час-120
Напор Н, м-80
Ток, I, А-85
КПД эл. двиг, %-86
Мощность эл. двиг, кВт- 33
Масса, кг, не более-194
Диаметр скважины, мм-250
Габаритные размеры в мм, не более D-235, L-1480

Манометր МТ – 100 տեխնիկական բնութագիր

Группа защиты от проникновения твердых частиц, пыли и воды по ГОСТ 14254-96: IP40	**Межповерочный интер** 2 года (поверка произв аккредитованной лабор
Диаметр корпуса, мм 160	**Класс точности:** 1,5
Диапазон показаний, МПа от 0 до 0,4; 0,6; 1,0; 1,6; 2,5; 4,0	**Исполнение:** Корпус - сталь, окрашен цвет; Стекло - техничес
Рабочий диапазон температур окружающего воздуха, °С	**Штуцер и трибко-секто** Латунь

*** Տրանսֆորմատորային ենթակայան- տեխնիկական բնութագիր**

Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան արտաքին տեղադրման LST-100/10 0,4կվ, 100ԿՎԱ

1. ճկվ-ի մուտքի սարքավորում
2. Ուժային տրանսֆորմատոր ՏՄ-100/10/.04կվ, 100ԿՎԱ
3. 0,4ԿՎ-ի բաշխիչ սարքավորում
4. Բաժանիչ ՐԼՀԴԱ-6/250, ՊՐՀՅ-6Մ շարժաթերով
5. Ավտոմատ անջատիչ 160Ա հոսանքի
6. Հաշվիչ էլեկտրոնային, եռաֆազ 380Վ, 5Ա հոսանքի տրանսֆորմատորներով, ՏԿ-20,200/5Ա /3 հատ/
7. Մետաղական արկղ հաշվիչի տեղադրման համար

***Կապալառուն պարտավոր է 1 տարի երաշխիքային ժամկետում վերացնել թերությունները իր կողմից իրականացված աշխատանքներում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	Վանդ-ԳԱՍՍ ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0001, Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 09419634
Հ/Հ՝ 900018001231	Հ/հ՝ 15700-11766900100
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Արթուր Սողոմոնյան	Գառնիկ Ներսիսյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ